**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ /ԲԱՂՐԱՄՅԱՆԻ/**
**ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան (Բաղրամյան) համայնք,
Բաղրամյան 2, Հեռ. (0233) 22250 ,
baghramyanbaghramyan.mu12-armavir.gov.am

N 70
*27 հունիս 2019թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 27.06.2019թվականին կայացած թիվ 5 նիստի որոշումները:

Առդիր 9թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԱ ՍԱՀԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-12066-2019
03 . 07 . 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

27հունիսի 2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-րդ նիստի
N 23 որոշում

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

*Ավագանին որոշեց՝*

1. Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 5-րդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|
| *Էդգար Արշակյան* | [signature] | ______ | ______ |
| *Կարեն Կարապետյան* | [signature] | ______ | ______ |
| *Նարեկ Տոմիկյան* | [signature] | ______ | ______ |
| Վահան Հարությունյան | [signature] | ______ | ______ |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնքի ավագանու*
*2019 թվականի հունիսի 27–ի*
*թիվ 5 նիստի*
*N23 որոշման*

*ՕՐԱԿԱՐԳ*

1. Օրակարգը հաստատելու մասին: (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

2. Բաղրամյանի համայնքի Բաղրամյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող բժշկական ամբուլատորիայի շենքը ,,Բաղրամյան -1 բժշկական ամբուլատորիա,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին:(Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

3. Համայնքի 2019թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին: (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

4. Բաղրամյան համայնքի 3,3հա և 1,4247հա հողատարածքները նախապատվության իրավունքով նախկին հողի սեփականատիրոջը՝ Բաբկեն Գարոյանին վարձակալությամբ տրամադրելու մասին: : (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

5. Բաղրամյան համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին: (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

6. Դրամական աջակցություն ցուցաբերելու մասին: (Համայնքի ղեկավար՝ Ա. Սահարյան).

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27 հունիսի2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-րդ նիստի
N 24 որոշում

**Բաղրամյանի համայնքի Բաղրամյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող բժշկական ամբուլատորիայի շենքը ,,Բաղրամյան-1 բժշկական ամբուլատորիա,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին.**

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.12.2015թվականի թիվ 1474-Ն որոշումը, ՀՀ կառավարության 07.12.2017թ. թիվ 1586-Ն որոշումը և 29.05.2019թ. Պետական գույքի նվիրաբերության N ՆԲ 02-2019 պայմանագիրը.

*Ավագանին որոշեց՝*

1. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան /Բաղրամյանի շրջան/ Բաղրամյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող 0,195հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող՝ 165,1 քառ,մ մակերեսով շենքի և շինությունները, որից 152,9 քառ.մետր մակերեսով բժշկական ամբուլատորիա, 6.3քառ. մետր մակերեսով հաքթակ և 4.5քառ.մետր մակերեսով ծածկ 1,4 քառ.մետր մակերեսով հաքթակ/, /այսուհետ՝ Գույք/ անհատույց անժամկետ տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ,,Բաղրամյան-1 բժշկական ամբուլատորիա,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|
| *Էդգար Արշակյան* | | | |
| *Կարեն Կարապետյան* | | | |
| *Նարեկ Տոմիկյան* | | | |
| *Վահան Հարությունյան* | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27 հունիսի2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-դ նիստի
N 25 որոշում

Բաղրամյան համայնքի 2019 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ավագանին որոշեց՝*

1. Տալ հավանություն համայնքի 2019թվականի հողային հաշվեկշռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|
| *Էդգար Արշակյան* | [signature] | | |
| *Կարեն Կարապետյան* | [signature] | | |
| *Նարեկ Տոմիկյան* | [signature] | | |
| *Վահան Հարությունյան* | [signature] | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27 հունիսի2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-դ նիստի
N 26 որոշում

**Բաղրամյան համայնքի 3,3հա և 1,4247հա հողատարածքները նախապատվության իրավունքով նախկին հողատարածքների սեփականատիրոջը Բաբկեն Գարոյանին վարձակալությամբ տրամադրելու մասին.**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21կետով, հիմք ընդունելով հողի նախկին սեփականատեր Բաբկեն Գարոյանի դիմումը.

*Ավագանին որոշեց՝*

1.Հողի սեփականատեր՝ Բաբկեն Գարոյանը իր սեփական 3,3հա ծածկագիր /04-029-0101-0001/ և 1,4247 ծածկագիր /04-029-0101-0002/ հողատարածքները հանձնել է Բաղրամյան համայնքին հետագայում այդ հողատարածքները վարձակալելու նպատակով և քանի որ Բաբկեն Գարոյանը հանդիսանում է ,,Ֆարտո Շին,, ՍՊԸ-ի տնօրեն, ուստի Բաղրամյան համայնքի սեփականություն հանդիսացող 3,3հա ծածկագիր /04-029-0101-0001/ և 1,4247հա ծածկագիր /04-029-0101-0002/ հողատարածքները նախապատվության իրավունքով տրամադրել ,,Ֆարտո Շին,, ՍՊԸ-ին վարձակալությամբ 25տարի ժամկետով:
Տարեկան վարձավճարի չափը 1,0հա-ի համար սահմանել 20000 ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
| --- | --- | --- | --- |
| *Էդգար Արշակյան* | | | |
| *Կարեն Կարապետյան* | | | |
| *Նարեկ Տոմիկյան* | | | |
| *Վահան Հարությունյան* | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27հունիսի2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-դ նիստի
N 27-Ն որոշում

Բաղրամյան համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասով,<<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշեց՝

1.Համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 11-ի <<Բաղրամյան համայնքի 2019թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|
| *Էդգար Արշակյան* | | | |
| *Կարեն Կարապետյան* | | | |
| *Նարեկ Տոմիկյան* | | | |
| Վահան Հարությունյան | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան(Բաղրամյան) համայնքի ավագանու
2019թվականի հունիսի 27-ի
N27-Ն որոշման

1. Բաղրամյան համայնքի 2019թվականի բյուջեի բաժին 01, խումբ 1, դաս 1 5121 հոդվածից 1511,2հազ. դրամ տեղափոխել բաժին 01, խումբ 6, դաս1 5113 հոդվածին, համայնքի տարածքում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար:

2. Բաժին 11, խումբ 1, դաս 2 4891 հոդվածից 300,0հազ.դրամ տեղափոխել բաժին 01, խումբ 1, դաս 1 4267 հոդվածին, 200,0հազ. դրամ տեղափոխել բաժին 01, խումբ 6, դաս 1 4823 հոդվածին:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Էդգար Արշակյան | | | |
| Կարեն Կարապետյան | | | |
| Նարեկ Տոմիկյան | | | |
| Վահան Հարությունյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2019 թվականի հունիսի 27
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27հունիսի 2019թ.
Բաղրամյան (Բաղրամյան) համայնք

5-դ նիստի
N 28 որոշում

*ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, սոցիալական վիճակը մեղմելու նպատակով.*

*Ավագանին որոշեց՝*

1. *Սոցիալական աջակցության կարիք ունեցող համայնքի բնակիչներ՝*
   *1.Ռազմիկ Մամիկոնյանին տրամադրել 25.000/Քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.*
   *2.Իդա Օվսեփյանին տրամադրել 20000/Քսան հազար/ ՀՀ դրամ.*
   *3.Արմենուհի Ազատյանին տրամադրել 20000/Քսան հազար/ ՀՀ դրամ.*
   *4.Մերուժան Ենոյանին տրամադրել 45000/Քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ.*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից.*

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|
| *Էդգար Արշակյան* | [signature] | | |
| *Կարեն Կարապետյան* | [signature] | | |
| *Նարեկ Տոմիկյան* | [signature] | | |
| *Վահան Հարությունյան* | [signature] | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature, seal] *Ա. ՍԱՀԱՐՅԱՆ*

*2019 թվականի հունիսի 27*
*Բաղրամյան (Բաղրամյան) համայնք*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

27.06.2019թ.

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու կողմից կազմված սոցիալական պաշտպանական բնագավառների մշտական գործող հանձնաժողովը քննարկեց Բաղրամյան համայնքի բնակիչների դիմումները սոցիալական օգնություն տրամադրելու մասին.

Ըստ ընտանիքների կարիքավորության աստիճանի ,հանձնաժողովը եզրակացրեց, որ Բաղրամյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին

1.Ռազմիկ Մամիկոնյանին տրամադրել 25000(քսանհինգ հազար) դրամ:

2.Իդա Օվսեֆյանին տրամադրել 20000/քսան հազար/ դրամ:

3.Արմենուհի Ազատյանին տրամադրել 20000/քսան հազար/ դրամ:

4.Մերուժան Եսոյանին տրամադրել 45000/քառասունհինգ հազար/ դրամ:

Սոցիալական պաշտպանության բնագավառի հանձնաժողով

Վահան Հարությունյան

Էդգար Արշակյան

Կարեն Կարապետյան

Նարեկ Տոմիկյան